

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9718

ԿԼԱՐԱ ՑԵՏԿԻՆ



Խ.Ս.Հ.Ս. ԺՈՒՐՆԱԼ-ԿՐՈՆԻԿԱ ԿԵՆՏՐ. ՀՐԱՄԱՎԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՀՈՍԿՎԱ

1926

1 DEC 2009
25 SEP 2006

ՀԿԻ 59
Կ-40 f.

Զ. ԲՈՅԱՐՄԱԿԱՅԱ

ԿԱՐԱ ՑԵՏԿԻՆ

(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

Օ Հ 1 9 0 9 6

ԽՍՀՄ ՔՈՂՈՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՄՈՍԿՎԱ

1926

9718

анн 332 3 1
Напечатано в типогр. Госиздата
„Красный Пролетарий“
Москва, Пименовская
ул., д. № 16, в коли-
чест. 3000 экз.
Главлит
№ 54296.

□ □
□



Ընկած պատճեն



06.03.2013

Ա. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն.

Կլարա Յետկինը իր կյանքի վերջին չորս
տասնյակ տարիների ընթացքում պայքարել ե
բանվոր դասակարգի ազատագրության համար:

Այդ ժամանակամիջոցում համաշխարհային հե-
ղափոխական պրոլետարիատը անցել է հաղթա-
նակների ու պարտությունների մի յերկար ու
ձիգ ճանապարհ։ Թե ծանր, մուժ ռեակցիայի
ժամանակ և թե հեղափոխական ալիքի վերելքի
տարիներին Կլարա Յետկինը միշտ մնացել է իր
հեղափոխական դիրքում՝ իր բոլոր ուժերը, ամ-
բողջ կյանքը անձնազո՞ն կերպով նվիրաբերելով
բանվոր դասակարգի պայքարի գործին։

«Նա խորը սեր և տածում դեպի ձնշվածնե-
րը և բուռն ատելություն՝ դեպի ձնշողները», —
այսպես ե գրում նրա մասին գերմանական սո-
ցյալ-գեմոկրատիայի հայտնի պատմաբաննը, Կլա-
րա Յետկինի յերկար տարիների զինակից ֆրանց
Մերինդը։

Նա իրեն հատուկ խանդավառությամբ, բուռն
սիրով նվիրվեց բանվոր դասակարգի ամենից ի-



6600-50

ըավագուրկ, ամենից թշվառ մասին—աշխատավոր
կանանց կազմակերպելու գործին:

Նա մեծ սիրով ու հաստատակամությամբ
մի քանի տասնյակ տարիների ընթացքում կազ-
մակերպել ե կանացի աշխատավոր մասսաներից
ուղղմիկ խմբեր ու միացրել պայքարող պրոլե-
տարիատի ընդհանուր շարքին:

Այժմ, թէպես և ալեզարդ, սակայն յերի-
տասարդական յեռանդով, շարունակում ե աշխա-
տավոր կանանց համախմբել կոմունիստական Ին-
տերնացիոնալի՝ համաշխարհային հեղափոխու-
թյան մարտական շտաբի կարմիր գրոշակի շուրջը:

Նա բաղդ ունի տեսնելու, թե ինչպես բոլոր
յերկրներում աճում ու լայնանում ե կանանց
մասսայական հեղափոխական շարժումը և թե
ինչպես գիտակցության ե գալիս ընկճած աշ-
խատավորուհին՝ հարստահարված Արևելքի ամե-
նայետամաց վայրերում:

Նա բաղդ ունի սեփական աչքերով տեսնելու,
թե ինչպես յերկրագնդի մեկ վեցերորդ մասում
աղատագրված ոռւս բանվորուհին ու գեղջկուհին
իրենց պրոլետար յեղբայրների հետ ձեռք ձեռքի
տված՝ կառուցում են սոցիալիզմի փայլուն թա-
գավորությունը, վորի իրականացումը յեղել ե և
ե նրա կյանքի ամբողջ նպատակը:

ԻնչՊԵՍ ԿԱՐՈՅ ՑԵՏԿԻՆԸ ՍՈՅԻԱԼԻՍ ԴԱՐՁԱՎ

Կլարա Եյմսեր Ցետկինը ծնվել է Սաքսոնիա-
յում (Գերմանիա) 1857 թ., Նրա հայրը գյու-
ղական ուսուցիչ եր և մեծ հարգանք եր վայե-
լում շըջապատողների կողմից, Փոքրիկ կլարան
իր մանկությունը անցկացրեց ազատ ու բախ-
տավոր, գյուղի յերեխաների հետ միասին նա
բարձրանում եր սարերն ու մի քայլ անգամ յետ
չեր մնում նրանց համարձակ ձեռնարկություննե-
րից, Բնության գրկում անցկացրած այդ ազատ
կյանքը նրա մեջ մշակեց այն տոկունությունը,
կենսուրախ, կայտառ ու համարձակ վոգին, վո-
րով աչքի յե ընկնում հեղափոխականի նրա փայ-
լուն գեմքը, Դեռ մանուկ հասակից իր քննա-
սեր խելքով ու արդարասիրությամբ կլարան զար-
մացնում եր բոլորին, Նա շատ վաղ սկսեց ուշա-
դիր գիտել եր շըջապատը և խորը մտածել հասա-
րակական անարդարության պատճառների մասին:

Ինչպես եյին հասարակական այն պայման-
ները, վորտեղ անց կացրեց կլարան իր յերիտա-
սարդ տարիները:

Անցյալ դարի վաթսունական թվականներին,
Սաքսոնիայում արդյունաբերության արագ աճ-
ման շնորհիվ արդեն գոյություն ուներ արդյու-
նաբերական բավականաչափ պրոլետարիատ, և
սոցիալական շարժումը ուժեղ տարածված էր
Սաքսոնիայի ջուհակների և ջուղակուհիների մեջ:

Կլարայի ծննդելուց 10 տարի առաջ Գերմա-
նիայում կազմվել եր կոմունիստական Միություն,
վորին ղեկավարում եյին բանվոր դասակարգի
մեծ առաջնորդներ և ուսուցիչներ՝ կարլ Մարք-
սը և Ֆրիդրիխ Ենգելսը: Նրանք սովորեցնում եյին
բանվորներին, վոր կապիտալիստների ու սրանց
կողմից շահագործվող բանվորների շահերի հակա-
սությունը վերջ ի վերջո հասցնելու յե դասա-
կարգային կատաղի ու անհաշտ կովի, վոր կա-
պիտակամի հետագա զարգացումը առաջնելու
յե դասակարգային պայքարի խորացում և վոր
բանվոր դասակարգը կասլիտալիստական հասա-
րակակարգի գերեզմանափորն և հանդիսանում:
Նրանք սովորեցնում եյին բանվորներին, թե ինչ-
պես պետք ե կազմակերպվել այդ կովի համար,
և վոր բոլոր յերկրների բանվորները պետք ե
համախմբվեն Միջազգային Միության շուրջը՝
կապիտալիստների դեմ միասին կովելու համար:
Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Ենգելսի գրած կոչը,
վոր հայտնի յե «Կոմունիստական Մասնիքեստ»

անունով և վորով «Կոմունիստաների Միությունը»
դիմում ե ամբողջ աշխարհի աշխատավորներին,
վերջանում է հետեւյալ խոսքերով—«Պրոլետար-
ներ բոլոր յերկրների, միացեք»:

Կարլ Մարքսի ղեկավարությամբ կազմվեց
I Ինտերնացիոնալը (Բանվորների Միջազգային
Միություն), վորը հայտարարեց բոլոր աշխատա-
վորներին Ընկերանալ և պայքարել՝ բոլոր յերկրնե-
րի բանվոր դասակարգի ազատագրման ու քա-
ղաքական իշխանությունը գրավելու համար:

I Ինտերնացիոնալի հեղափոխական գործնե-
յությունը խիստ վախեցրեց բուրժուազիային,
վորը անխնա կոփի սկսեց բանվորական կազմա-
կերպությունների դեմ: Մանավանդ Փրանսական
բուրժուազիան սոսկալի պատժեց Փարիզի բան-
վորներին ու բանվորուհիներին, վորոնք 1871 թ.
կոմունա եյին կազմել:

Դա բանվոր դասակարգի առաջին փորձն եր՝
զենքի միջոցով բանվորական իշխանություն հաս-
տատելու: Բայց վորովհետև թե Ֆրանսայի և թե
մյուս յերկրների պրոլետարիատը ոգնության
չհասավ նրանց, նրանք չկարողացան դիմադրել
բուրժուազիայի գրոհին: Կոմունարները դիմա-
ցան միայն յերեք ամիս: Փարիզյան կոմունան
ձնշելիս բուրժուազիայի վրեժինդրությունը սահ-
ման չուներ. 70,000-ից ավելի բանվորներ սպան-

վեցին, վիրավորվեցին ու աքսորվեցին։ Փարիզյան կոմունայի ավերումից հետո I հնտերնացիոնալը փաստորեն մեռավ։

Ահա այն պատմական պարագաները, վորոնց մեջ անցան Կլարայի կյանքի առաջին դիտակից տարբիները։

Կլարան սովորել է Սաքսոնիայի գլխավոր քաղաք Լայպցիգի ուսուցչական սեմինարիայում։ Նա այստեղ մտերմացավ հեղափոխականորեն տրամադրված մի խումբ ուսւու ուսանողների հետ։ Կլարայի վրա մեծ տպավորություն թողեց առաջին համդիպումը մի սոցիալիստ բանվորի հետ, վորի մոտ ապրում ելին ուսւու ուսանողներ։ Այդ բանվորից նա սկսեց ստանալ սոցիալիստական լրագրներ և իմացավ սոց.-դեմոկրատական կուսակցության՝ բանվորների մեջ տարած աշխատանքի մասին։ Ուսւու ուսանողներից մեկի հետ նա սկսում է հաճախել բանվորական ժողովները։ Ընտանիքը խեթ եր նայում նրա «կասկածելի» ծանոթություններին, և Կլարան դըմ համար ստիպված եր զանազան միջոցների դիմել, վորպեսզի հնարավորություն ունենա հաճախել բանվորական ժողովները։ Նա ծնողներին ասում եր, վոր իբր թե ընկերունուն ե այցելում, բայց գնում եր բանվորական ժողովներ, վորպեսզի ծնողները չնկատեն, վոր նա ուշ ե տուն վերադառնում։

ստպիված եր իր սենյակը պատուհանից ներս մտնել։

Նա այդ շրջանում անքուն գիշերներ եր անցկացնում կասսալի և Կարլ Մարքսի գրքերի վրա։ Այդ գրքերում նա պատասխան եր գտնում բազմաթիվ հարցերի, վորոնք այնքան տաճջում եյին նրան։ Իր վիճառած արդարությունը նա գտնում ե Կարլ Մարքսի և կասսալի գրքերում ու դառնում սոցիալիստ։

19 տարեկան հասակում նա ավարտում ե սեմինարիան ու դաստիարակչունու պաշտոն ստանում մի հարուստ ֆաբրիկանտի տանը։ Նրա աշակերտուհիները ընդամենը մեկ-յերկու տարով ելին փոքր իրենց դաստիարակչունուց, իրեն հատուկ յեռանդով՝ Կլարան սկսում ե իր աշակերտուհիներին սոցիալիստական վոգով դաստիարակել։ Նա ոգտվում եր ամեն մի փոքրիկ հանգամանքից, վորպեսզի ցույց տա շրջապատի ամբողջ կեղծիքն ու խաբեյությունը և իր «հավատին» դարձնի բոլոր նրանց, ում հետ իր կյանքում ընդհարվում եր։ Յեվ այստեղ արդեն աչքի յեն ընկնում Կլարայի ազիտացիոն ընդունակությունները ու նրա խորը անհատականության հմայքը։

Ֆաբրիկանտը տեսնում ե, վոր իր աղջիկները «մսասակար» դաստիարակություն են ստանում, և ստիպված եր համբերել, քանի վոր յե-

թե կլարային հեռացներ, վախենում եր վոր իր աղջկներն ել հետը կզնան—այնքան եյին նրանք կապվել իրենց դաստիարակչունու հետ։ Շատ անգամ, յերիտասարդ կլարան, վոր միամտորեն հավատում եր, թե սոցիալական հեղափոխությունը շատ շուտ կլինի, ֆաբրիկանտի հետ ունեցած վեճի ժամանակ տաքացած ասում եր. «Յերբ դուք կկանգնեք ապստամբված ժողովրդի դատաստանի առաջ՝ ինձնից ոգնություն չսպասեք»։ Ու ֆաբրիկանտը լոռությամբ տանում եր այս բոլորը։

Նույն պատիվը ու հարգանքը ձեռք բերեց նա խոշոր գործարանատիրոջ ընտանիքում, ուր նա հետագայում կրկին դաստիարակչունու պաշտոն ուներ։ Կլարային հարգում եյին նրա ամբողջական բնավորության, ճշմարտասիրության, դեպի իր գաղափարներն ունեցած անձնվիրության համար։ Մի անգամ գործարանատերը դարձավ կլարային նույնիսկ հետևյալ խոսքերով. «Եհ, դաստիարակեցեք իմ յերեխաներին սոցիալիստական վոգով, յես համոզված եմ, վոր 100—150 տարուց հետո հաղթանակը ձերն ելինելու»։ Նույն այդ գործարանատերը շատ եր համոզում կլարային մնալ մինչև մահ իրենց մոտ՝ խոստանալով նրան լիովին ապահովել։

Սակայն կլարան այդ ժամանակ միանգամայն

ուրիշ կյանքի մասին եր յերազում։ Ռուս հեղափոխականների նման, նա պատրաստվում եր «գնալ ժողովրդի մեջ», սովորեցնել գյուղի յերեխաներին ու ժողովրդի մեջ տարածել սոցիալիզմի գաղափարները։ Բայց այդ ժամանակ Գերմանիայում ստեղծված քաղաքական պայմանները և կլարայի անձնական կյանքի հանգամանքները թույլ չտվին նրան իրագործել իր դիտավորությունները։

1878 թվին գերմանական կառավարությունը, մինիստր Բիսմարկի գլխավորությամբ, վախենալով հեղափոխական շարժման արագ աճումից ու զարգացումից՝ սոցիալիստական կուսակցությունը հայտարարեց անլեգալ, ժողովները արգելվեցին և 45 սոցիալիստական թերթեր փակվեցին։ Կուսակցության աջքի ընկնող ղեկավարները բանտարկվեցին կամ աքսորվեցին։ Նրանցից շատերը հետապնդումներից ազատվելու համար փախան Շվեցարիա, ուր այն ժամանակ քաղաքական փախստականներին ապաստան եյին տալիս։ Գերմանիայից փախած հեղափոխականների մեջ եր գտնվում ուրս եմիգրանտ Ռիփ Յետկինը՝ կլարայի մտերիմ ընկերը, վորը Լայպցիգի բանտից ազատվելուց հետո գնաց Շվեցարիա։ Կլարան ևս Գերմանիայից գնում ե Ավստրիա, կարճ ժամանակ ապրում ե Ռուսաստանում և Իտալիա-

յում, իսկ հետո անցնում ե Շվեցարիա։ Այս-
տեղ նա աշխատում ե «Սոցիալ-Դեմոկրատ» թեր-
թի եկապեդիցիայում։ Թերթը հրատարակվում եր-
ջյուրիխում և անլեզալ ուղարկվում Դերմանիա։
Եկապեդիցիայում աշխատանքը շատ դժվար եր-
և տարվում եր գաղտնի ու մեծ զգուշությամբ,
վորովհետեւ գերմանական կառավարությունը դի-
մում եր ամեն տեսակի պրովակացիոն միջոց-
ների, վորպեսզի իմանա, թե ինչ ճանապարհով
և ում հասցեյով ե ստացվում զրականությունը,
վորը՝ չնայած պաշարողական դրությամն՝ միշտ քաղքա-
քաղաքներում հեղեղել եր բանվորական թաղերը։
Յերիտասարդ կլարան իր ստանձնած աշխատան-
քը տանում ե հաջողությամբ ու վայելում եքս-
պեդիցիայի վարիչ Մոտելերի հավատը։ (Մոտե-
լերը գերմանական սոցիալ-դեմոկրատիայի պատ-
մության մեջ հայտնի յե «Կարմիր Յրիչ» մա-
կանունով)։ Կլարան Յյուրիխից անցնում ե Փա-
րիզ, ուր մտերմանում ե Կարլ Մարքսի աղջկա՝
Լառը կաֆարգի հետ, Գեղի և ֆրանսական
սոցիալիստների ուրիշ զեկավարների հետ։

Այդ շրջանում նա սկսում ե լուրջ ուսում-
նասիրել Կարլ Մարքսի գրվածքները, Ֆրանց
Մերինգը հետագայում նրա մասին գրում ե.
«Մարքսի թեորիան կլարայի ժամանակակիցնե-
րից շատ քչերը գիտեն այնպես հիմնավոր, ինչ-

ոյն կլարան, բայց հազիվ թե գտնվի մեկը, վոր
այդ ուսմունքը նրանից ավելի հիմնավոր գի-
տենա»։

Նա թղթակցում ե ֆրանսական առաջին սո-
ցիալիստական թերթին՝ «Սոցիալիստին», ուր նա
հաճախ զետեղում ե իր հոդվածները՝ կեղ-
ծանուններով կամ իր ամուսին Ռոխա Յետիկինի
ստորագրությամբ, ի նկատի ունենալով այն ճան-
գամանքը, վոր առնասարակ կնոջ գրած հոդված-
ները այնքան ել հաճույքով չեյին տպագրում։

Լառը կաֆարգի հետ միասին նա փորձում
է կազմակերպել սոցիալիստ կանանց խմբակ, սա-
կայն այդ փորձը չի հաջողվում։

Իր ամուսնու հետ միասին յերկար ժամա-
նակ աշխատում ե գերմանական սոցիալիստների
ակումբում, ուր նրանք դասախոսություններ են
կարգում գերմանական եմիգրանտների և բան-
փորների համար։

Փարիզում անցկացրած աքսորական կյանքի
վերջին տարիները կլարան շատ մեծ մասնակ-
ցություն ունեցավ 11 Խնտերնացիոնալի առա-
ջին համագումարի նախապատրաստական աշխա-
տանքներին։ Նա կապ եր հաստատել անգլիա-
կան, գերմանական և ֆրանսական սոցիալիստ-
ների հետ։ 1889 թվին վերջապես հրավիրվում
ե համագումարը, վորտեղ կլարան դուրս ե գա-

լիս մի զեկուցումով, վորով ապացուցում ե, վոր
անհրաժեշտ ե աշխատել քաղաքական կյանքին
մամնակցելու իրավունք ձեռք բերել նաև կա-
նանց համար:

Յերկար տարիների բանտարկությունները և
կիսաքաղց կյանքը միանգամայն քայլայեցին
Ոսկալ Յետկինի առողջությունը և նա մեռավ
յերիտասարդ հասակում, թողնելով կլարային իր
յերկու մանուկների հետ:

ԱԼԱՐԱ ՅԵՏԿԻՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Յերբ գերմանական կառավարությունը, սո-
ցիալիստների գեմ բացառիկ որենքի հրատարա-
կումից 12 տարի հետո, բանվորների հեղափո-
խական շարժման աղդեցության տակ ստիպված
եր այդ որենքը վերացնել, գերմանական հեղա-
փոխական եմիգրանտները շատապեցին վերադառ-
նալ հայրենիք, վորովեսպի անմիջական մասնակ-
ցություն ունենան լայն տարածվող բանվորա-
կան շարժմանը: Գերմանիա վերադարձավ նաև
կլարա Յետկինը: Այդ ժամանակից յերկար տա-
րիներ նա աշխատում ե անգուլ ու անձնուրաց՝
գերմանական սոց.-դեմ. կուսակցության շար-
քերում: Նա մասնակցում ե կուսակցության
բոլոր համագումարներին, II Խոտերնացիոնալի
համագումարներին և զրական մեծ աշխատանք
ե տանում: Նա հանդիսանում է կուսակցության
ամենից սիրելի ու ամենից չնորհալի ազիտա-
տուրներից մեկը: Հարստահարողների ու շահա-
գործողների գեմ ուղղած իր բոցավառ կոչերով,
բազմամարդ ժողովներում հազարավոր մարդ-
կանց նա իր կողմն եր գրավում: Մարտիկին հա-



տուկ յեռանդով, բոցավառ պերճախոսությամբ, իր յեզակի սրամտությամբ, կարան պայքարի կրակ եր վառում բանվորական դասակարգի նույնականաց ու ամենից թշվառ խավերի մեջ:

Կլարայի հեղափոխական գործնեյության աչքի ընկնող կողմը աշխատավոր կանանց մեջ տարած աշխատանքն եւ: Աքսորից վերադառնալուց անմիջապես հետո նա անցնում է գերմանական պրոլետար կանանց մեջ տարվող աշխատանքի դլուխը: Այն ժամանակները Գերմանիայում աշխատավոր կանանց մեջ աշխատանք տանելը շատ դժվար եր, վորովհետև, մի կողմից, նրանք շրջապատված եյին ամեն տեսակի նախապաշարմունքներով և կարծում եյին թե կնոջ դործը միայն ընտանեկան կյանքն եւ և քաղաքական ու հասարակական խնդիրներում նա չպիտի խառնվի, մյուս կողմից, սոցիալիստների գեմ յեղած բացառիկ որենքի նույնիսկ վերացումից հետո ել կանայք զրկված եյին քաղաքական ժողովներ հաճախելու իրավունքից, ուստի և ստիպած եյին նրանց մեջ աշխատանքը տանել ակումբներում՝ կուլտուրական լուսավորության աշխատանքի անվան տակ:

Շատ ջանք եւ թափել կլարան՝ գերմանական բանվորունու դասակարգային գիտակցությունը

զարգացնելու և նրան ընտանիքի նեղ շրջանակից գեպի քաղաքական ակտիվ կովի լայն ձանապարհը՝ գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության շարքերը դուրս բերելու դործում: Կլարան ստիպված եր նույնպես կովել այն ընկերների գեմ, վորոնք կամ չեյին հասկանում, կամ չեյին գնահատում կնոջ գերը գերմանական պրոլետարիատի ընդհանուր կովի մեջ ու մատների արանքով եյին նայում, վորպես յերկրորդական խնդրի վրա:

Կուսակցության աղղեցությունը նաև կանանց լայն մասսաների վրա տարածելու համար կլարա Ցետկինը հրատարակում եւ «Հավասարություն» պարբերական թերթը, վորը դառնում է գերմանական բանվորունու մարտնչող որգանը: Այդ թերթի եջերում կլարա Ցետկինը յերկար տարիներ շարունակ բացատրում եւ աշխատավոր կանանց, վոր տնտեսական և սոցիալական ազատագրման միակ ճանապարհը — դա համաշխարհային պրոլետարների շարքերում միացյալ ուժերով կապիտալիզմի գեմ կովելու ճանապարհն եւ:

«Հավասարության» եջերում կլարան դիմացերծ եւ անում «Փեմինիզմի» իսկական եյությունը: Այսպես եր կոչվում կանանց մանրբութուական շարժումը, վորը ձգտում եր համախմբել բոլոր դասակարգերի կանանց՝ քաղա-

քական իրավունքներ ձեռք բերելու համար: Նրանք աշխատում եյին իրենց կողմը գրավել նույնպես և բանվորուհիներին և այդպիսով մթագնել նրանց դասակարգային գիտակցությունը: «Հավասարություն» թերթում գետեղած իր հոդվածներում կլարան բացում ե «քույրիների» քարոզների սուտն ու կեղծիքը և նրանց ձգտումը՝ մասնակցելու միմիայն հրամայող, ունեոր դասի իշխանությանը: Նա կոչ ե անում խուսափել ֆեմինիզմի ցանցերից և գիմել գեղի գիտակից կոփվը՝ կապիտալիստների իշխանությունը տապալելու համար:

Աշխատավոր կանանց մեջ տարած յերկարամյա աշխատանքի փորձը կլարային բերում ե այն համոզման, վոր անհրաժեշտ ե առանձնահատուկ ձևերով ու մեթոդներով տանել այդ աշխատանքը: 1896 թ. Գոթում կայացած գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության համագումարում ընդունվում ե կլարայի այն առաջարկությունը, թե անհրաժեշտ է կուսակցության մեջ ունենալ հատուկ ապարատներ՝ աշխատավոր կանանց մեջ աշխատանք տանելու համար: Կանանց այդ «հանձնաժողովները» մեծ գեր խաղցին գերմանական բանվորուհիներին համախմբելու և կազմակերպելու գործում:

Բացի գերմանական բանվորուհիների մեջ տա-

րած աշխատանքից, կլարա Յետկինը ղեկավարել է կանանց հեղափոխական շարժումը նաև մնացալ բոլոր յերկրներում:

Սոցիալ-դեմոկրատների՝ գլխավորապես կլարա Յետկինի նախաձեռնությամբ հրավիրվում են կանանց յերկու միջազգային խորհրդակցություններ, վորոնցից մեկը՝ 1907 թ., Շտուտգարտում, իսկ մյուլիք՝ 1910 թ., կողենհագենում (Դանիա): Առաջին խորհրդակցությունը վորոշում ե հիմնել կանանց Միջազգային Բյուրո, վորը պետք ե համախմբել բոլոր յերկրների կանանց սոցիալիստական շարժումը:

Կլարա Յետկինը ընտրվում ե այդ Բյուրոյի քարտուղար, իսկ նրա «Հավասարություն» պարբերական թերթը՝ Բյուրոյի կենտրոնական որգանն ե դառնում:

Սոցիալիստ կանանց յերկորդ միջազգային խորհրդակցությունը կլարայի առաջարկությամբ վորոշում ե բոլոր յերկրներում տոնել կանանց Միջազգային Որը, վորն այնքան մեծ գեր ե խաղում աշխատավոր կանանց լայն մասսաները կազմակերպելու գործում:

Կանանց Միջազգային Բյուրոյի ղեկավարությամբ, վորի գլուխն եր կանգնած կլարա Յետկինը, կանանց սոցիալիստական շարժումը շատ յերկրներում սկսեց խոր արմատներ գցել ու

աճել։ Բայց համաշխարհային պատերազմը սկսվելով, միջազգային կապերը կտրվեցին, և կանանց Միջազգային Բյուրոն փաստորնեն դադարեցրեց իր գործնեյությունը։

Բայց Կլարան վոչ միայն աղիտացիոն և կուսակցական մեծ աշխատանք եր տանում, այլև անհաշտ պայքար եր մզում կուսակցության ներսում այն համաձայնողական ղեկավարների ղեմ, վորոնց կարծիքով բանվոր դասակարգին կապիտալի լծից կարելի յե ազատագրել առանց խոշոր ցնցումների ու առանց սոցիալիստական հեղափոխության։ Այդ ղեկավարները հետզհետե մոռացության եյին տալիս բանվորների հեղափոխական շարժման հիմնական նպատակը և չափավորություն ու զգուշություն եյին քարոզում։ Կլարան յեռանդուն կերպով դուրս եր դալիս գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ներսում գոյություն ունեցող այդ վտանգավոր ու վնասակար հոսանքի ղեմ։ Նրա այդ անհաշտ և պայքարի մեջ անշեղ հատկության համար թշնամիները նրան «Վայրենի Կլարա» անունը կացըին։

Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մի մասի՝ հեղափոխական պայքարից աստիճանաբար հեռացումը պսակվեց այդ մասի դավաճանությամբ (համաշխարհային պատերազմի սկզբին)։ 1914 թ. ոգոստոսի 4-ին նրա առաջնորդները քվեարկե-

ցին հոգուտ զինվորական վարկի, ուրիշ խոսքով, ձայն տվին հոգուտ համաշխարհային պատերազմի, վորը սկսված եր կապիտալիստների շահերը պաշտպանելու համար ու բանվոր դասակարգին անչափ թշվառություն պատճառեց։ Այդ քվեարկությամբ գերմանական սոցիալ-դեմոկրատիան ստոր ու խայտառակ կերպով դավաճանեց բանվոր դասակարգին և վերջնականապես դարձավ գերմանական բուրժուազիայի պնակալեզ ծառան։

Գերմանական սոցիալ-դեմոկրատիան 11 ինտերնացիոնալում ամենասուժեղ կուսակցությունն եր հանդիսանում և նրա դավաճանությունից հետո փաստորեն քայլքայվեց նաև 11 Ինտերնացիոնալը, վորի համարյա բոլոր սեկցիաները, գերմանական սոցիալ-դեմոկրատիային հետեւլով՝ իրենց յերկներում «քաղաքացիական հաշտություն» կնքեցին բուրժուազիայի հետ և կոչ արին պաշտպանել իրենց հայրենիքը։

Յերբ գերմանական սոցիալ-դեմոկրատիան բացարձակորեն անցավ բուրժուազիայի կողմը և կոչ արեց գերմանական բանվորներին մասնակցել յեղբայրասպան պատերազմին՝ Կլարա Յետկինը և Կարլ Լիբկնեխտը դուրս են գալիս այդ սարսափելի սպանդանոցի ղեմ, վոր կազմակերպել եյին համաշխարհային զիշատիչները իրենց անդուսպ շահախնդրությունը հագեցնելու համար

և գերմանական բանվորներին միջազգային համեմատության քարող եյին կարդում։ Պատերազմի դեմ ուղղած այդ կոչի համար Կլարային յերկար ժամանակ բանտ են նստեցնում, սակայն վոչ մի հետապնդում չի կասեցնում նրան իր հեղափոխական պարտքը կատարելուց։

Պատերազմի միջոցին ևս Կլարան սուս բոլշևիկների հետ միասին փորձ ե անում վերականգնել միջազգային կապը և 1915 թվի գարնանը Բերն քաղաքում հրավիրում ե կանանց միջազգային խորհրդակցություն, բայց այդ խնդիրը հաջողվեց գլուխ բերել միմիայն III Խռտերնացիոնալի հիմնվելուց հետո։

Կլարան շատ մոտ մասնակցություն ե ունենում այն յերկու խորհրդակցություններին, վորոնք պատերազմի ժամանակ կայացան Շվեյցարիայում, բոլցեկլյան խմբակի առաջնորդ Լենինի գլխավորությամբ։ այդ խորհրդակցություններին մասնակցում են նաև շատ յերկրների փոքրաթիվ խմբակցություններ, վորոնք հավատարիմ եյին մնացել միջազգային հեղափոխական բանակին, և կոչ եյին անում բոլոր յերկրների բանվորներին դադարեցնել յեղբայրասպան պատերազմը։

Այդ ժամանակ գերմանական սոցիալ-դեմոկրատիայի շարքերում պառակտում առաջացավ։

Գերմանական սոցիալիստների մի խումբ — կ. լիբեկնեխտի, Ռոզա Լյուկսեմբուրգի, Կլարա Ցետկինի և Ֆրանց Մերինգի ղեկավարությամբ կազմակերպեցին «Սպարտակ» (հին Հոռվում ապրատամբած ստրուկների առաջնորդի անունով) միությունը, վորը ուժեղ պայքար սկսեց արյունահեղ պատերազմի և սոցիալ-մատնիչների դեմ։

1917 թվականին, յերբ Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիները, վոնդելով կալվածատերերին և ֆարբիկանաներին, իշխանությունը իրենց ձեռքը վերցրին, — Կլարա Ցատկինը առաջններից մեկն եր, վոր հասկացավ Հոկտեմբերյան Հեղափոխության նշանակությունը համաշխարհային պրոլետարիատի ազատագրման համար։ Խորհրդային Ռուսաստանի մասին տարածված ստի ու չարամիտ հարձակումների պահին նա իր ձայնը բարձրացրեցի պաշտպանությունաշխարհիս յերեսին առաջն պրոլետարական պետության՝ համաշխարհային հեղափոխության այդ հիմնաքարի։ Բուրժուական պետությունները կոմունիզմի ուրվականից մահվան սարսուսի մեջ ընկած՝ վոչ մի միջոցի առաջ կանգ չեյին առնում Խորհրդային Ռուսաստանը չեղոքացնելու համար։ Իրենց յերկրի բանվորներին հեղափոխությունից կասեցնելու համար նրանք բամբասում եյին առաջին պրոլետարական հեղափոխությունը և դա-

ժան գույներով նկարագրում Խորհրդային Ռուսաստանի ներքին գրությունը: Կլարան բազմաթիվ անգամ դուրս է յեկել պաշտպանելու Խորհրդային Ռուսաստանը և բացատրել Արևմբայան Յեվրոպայի պրոլետարիատին ու մասնավորապես Գերմանիայի բանվորներին՝ խորհուրդների յերկրում կատարվող մեծ դեպքերի նշանակությունը:

Հոկտեմբերյան հեղափոխությունը արագացրեց հեղափոխական ապստամբությունը Գերմանիայում: 1918 թվին գերմանական բանվորները գահընկեց արին Գերմանիան «աստուծովողորմածությամբ» կառավարող կայզերին: Բուժուազիան դողում եր: Բայց գերմանական պրոլետարիատը, ինչպես համաշխարհային պատերազմի սկզբին, այնպես ել այս անդամ, խարվեց սոցիալ-մատնիչներից՝ գերմանական մենշևիկներից, և անձեռնմխելի թողեց մասնավոր սեփականությունն ու միապետական ապարատը: Ինչպես պատերազմի սկզբին, այնպես ել այս դեպքում՝ գերմանական մենշևիկները հանդես են գալիս վորակես կապիտալիզմի վրկիչներ: Գերմանիայի հեղափոխական բանվորների ապստամբությունը խեղզվում է արյան ծովում: Գերմանական պրոլետարիատի լավագույն առաջնորդներին—Ռոզա Լյուքսեմբուրգին և Կարլ Լիբենեխտին դադանա-

բար սպանում են: Կլարայի ամենամոտ աջակցությամբ կազմվում է գերմանական կոմունիստական կուսակցությունը: Զնայած իր հիվանդ գրության և այն ուժեղ հարվածին, վոր պատճառեց գերմանական պրոլետարիատի առաջնորդների և իր մոտիկ ընկերների ու յերկարացյագինակիցների կորուստը, Կլարա Յետիկինը շարունակում է իր անդուլ ու յեռուն գործնեյությունը:

Կլարան յերազում եր տեսնել այն յերկիրը, վորը հանդիսանում է կապիտալիստական հասարակակարգի լծի տակ բոլոր տանջվողների իակական հայրենիքը: Միայն 1921 թ. նրան հաջողվում է գալ Խորհրդային Ռուսաստան: Մեծ եր Խորհրդային Միության բանվորուհիների ուրախությունը, յերբ իրենց ըրջանում տեսան համաշխարհային հեղափոխական շարժման վետերաններից մեկին: Այն ժամանակից Մոսկվայի բանվորուհիները արդեն սովորել են տեսնել նրան իրենց ըրջանում թե հանդիսավոր և ուրախ որերին և թե մեռած ընկերների պատճառած խորը վշտութակի պահին: Նա դարձել է բանվորուհիներին և նրանց ժողովների հաճախակի հյուրը: Բայց միմիայն Մոսկվայի բանվորուհիները չեն, վոր մոտիկ ճանաչում են Կլարային: Զնայած իր պատկառելի հասակին ու թույլ

առողջությանը, Կլարան 1925 թ. ամառը ձեռնարկեց մի շատ հոգնեցուցիչ ագիտացիոն ճամբորդության—Վոլգայի վրա: Նա կանգ է առնում մի շարք քաղաքներում, դասախոսություններ ե կարդում և ծանոթանում ե բանվորուհիների ու գեղջկուհիների գրությանը: Նույն թվի աշնանը Կլարան մեկնում ե Գերմանիա: Այնտեղ նա շրջում է ամբողջ յերկիրը, դուրս ե գալիս բազմաթիվ ժողովներում, վորտեղ բանվորների լայն մասսաների առաջ գիմազերծ ե անում Լոկարնոյի պայմանագիրը—կապիտալիստների՝ Խորհրդային Իշխանության դեմ կազմակերպած այդ նոր դավադրությունը: Վերադառնալով Ռուսաստան, Յետինը կուսակցության *XIV* համագումարում հանդես ե գալիս վողջույնի խոսքով՝ գերմանական պրոլետարիատի անունից:

«Յես բերել եմ ձեզ Գերմանիայի բոլոր կոմունիստների բոցավառ վողջույնը: Վոչ միայն կոմունիստներից, այլև Գերմանիայի մեծ ու փոքր քաղաքների՝ Բերլինի, Հայմինցի, Քյոլնի, Հեսսենի և ուրիշ կենտրոնների բոլոր բանվորներից ու բանվորուհիներից: Ամեն տեղ, բազմամարդ ժողովներում, պառավներն ու ծերերը, կենտրախ պատանիներն ու յերեխաները ինձ առում ենին. «Յերբ դու կվերադառնաս այստեղ՝ Մոսկա, ասա՛ նրանց, վոր մենք արդեն սովո-

րել ենք նրանց սիրել, վոր մենք սովորել ենք հետեւել Խորհրդային հանրապետության շինարարական աշխատանքին, վոր մենք յերազում ենք ու սովորում, թե ինչպես պետք ե գնանք նրանց ճանապարհով»:

Ներկայումս, ինչպես և իր յերիտասարդ հասակում, Կլարան անխնա զոհաբերում ե իր ամբողջ ուժը, փայլուն ընդունակությունները, հեղափոխական հարուստ փորձառությունը՝ բանվոր դասակարգի ազատազրման և համաշխարհային հեղափոխության գործին:

Նա կոմունիստական ինտերնացիոնալի Գործադիր կոմիտեյի անդամ է, ՄՈՊՌ-ի Գործադիր կոմիտեյի անդամ, ղեկավարում ե կոմինտերնի կանանց Միջազգային Քարտուղարության աշխատանքը: Վերջինս հսկայական ջանքեր ե թափել՝ աշխատավոր կանանցը հեղափոխական կոմունիզմի վոգով դաստիարակելու և համաշխարհային պլուտարիատի պայքարի ընդհանուր հունի մեջ քաշելու:

Ալեհեր, սակայն հավետ յերիտասարդ, Կլարա Յետինը իր մարտական տեմպերամենառվ, իր յերկաթե կամքով, գեպի բանվոր դասակարգի դատնունեցած իր անսահման անձնվիրությամբ՝ մի փայլուն որինակ ե ծառայում անխորտակելի կամքի, վոր ուղղված ե գեպի կոմունիզմի հաղթանակը:

ԽՈՐՀ. ՍՈՅ. ՀԱՆՐ. ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ
ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
— Հ ա յ կ ա կ ա ն ս ե կ ց ի ա —
Մոսկվա, Նիկոլսկի փող. և 10.

- Ի. ԱՏԱԼԻՆ—Գյուղացիական հարց: Գինը 50 կոպ.
Ի. ԱՏԱԼԻՆ—Ազգային հարցը: (Տպագրվում է):
Վ. ԼԵՆԻՆ Պատգամներ յերիտասարդության. գինը 15 կ.
Ն. ԿՐՈՒՊԾԿԱՅԱ. —Լենինի պատգամները ժողովրդական
լուսավորության մասին: Գինը 20 կ.
Զ. ԲՈՅԱՐՄԿԱՅԱ. —Կլարա Ֆեռնանդա (կենսագր.): Գինը 10 կ.
Ն. ՏՈՒՐՑԱԿՈՒԼՈՎ. Ազգային հարցը յեվ դպրոցը:
Գինը 40 կոպ.
Բ. ԺՈՎՈՐՈԽՈՎ. Հասարակագիտությունը I աստիճանի
դպրոցում:
Ն. ԵԼԻԶՈՅՈՎ. —Ի՞նչ վորուեց կուսակցության XIX հա-
մագումարը:
Ա. ԳՄԻՏՐՅԵՎ. Ս. —Տգիտությունը յեվ սնահավատությունը:
Գինը 15 կոպ.

- Մ. ԼԻՎԵՆՍԿԻ. —Գյուղատնտեսական հարկ: Գինը 20 կ.
ՅԵՍԻՊՈՎ. —Գյուղացիության պահանջները յեվ խորհրդա-
յին դպրոցի ծագրները: Գինը 12 կ.
Պ. Վ. Ա. ՍՈՎ. —Հողի մշակումը յերաշի ժամանակ:
Գինը 40 կոպ.
Լ. ՅՈԶԵՖՈՎԻՉ. —Գյուղ կանգնի գերան կլոտրի (կոռպե-
րացիան զյուլում): Գինը 30 կոպ.
Բ. ՊՈՒՅԱՊՈԼՍԿԻ. Ասծու կամբը թէ՞ գյուղատնտեսական
գիտությունը:
ԳՈՒԳԼԻՆ. —Փորող փալտից մինչեվ ՏՐԱԼՏՐՈՒՄ:
Ա. ԿՐՈՎԶԵՆԿՈ. —Թէ՞ ինչպես կարելի յե զյուլում եկե-
տականություն անցկացնել:
Ա. ՍԿՈՄՈՐՈԽՈՎ. —Առաջին ոգնությունը հիվանդ կեն-
դանուն:

- Ա. ԲՐՈՆՍԲՈՒՐԳ—Ընտանի կենդանիների վարակիչ հիվանդությունները:
- Ն. ՍԵՄԱՇԿՈ—Թոմաս (պատկերազարդ):
- Բ. ԳԻՆՍԲՈՒՐԳ—Յերեխանների վարակիչ հիվանդությունները:
- Վ. ԲՐՈՆՆԵՐ—Վեներական ախտեր (պատկ.) գինը 25 կ.
- Ս. ՍՊԵՐԱՆՍԿԻ—Մոր այբոքենը (պատկ.):
- Ն. ՍԵՄԵԿԻՆ—Արեվը, նրա վորդիները յեզ բռուները:
(Տպագր.):
- Ա. ՌՈՒԲԻՆՇԵՑՆ—Ռւդիկ մինչեվ այերոպլան: (Տպագր.):
- Վ. ՅԱԶՎԻՑԿԻՑ—Մարդկային բնակարանի պատմոք.
- Մ. ԳՈՐԿԻՑ—Յերիտասարդ գրողը: Մարդը:
- Ա. ՍԵՐՈՅԻՄՈՎԻՉ—Պատմվածքներ: (Տպագր.):
- Դ. ՄԱՄԻՆ-ՍԻԲԻՐՅԱԿ—Մոծակի յեզ արջի մասին:
(Պատկերազարդ): Գինը 13 կ.
- Պ. ՈՐԼՈՎԵՑ—Ճամբորդություն այերոպլանով: (Պատկերազարդ): Գինը 20 կ.
- Պ. ՈՐԼՈՎԵՑ—Քիմիկոս Կուզկան: (Պատկ.) գինը 25 կ.
- Ա. ԿՈՒՊՐԻՆ—Յերկրի խորեւում: (Պատկ.) գինը 15 կ.
- Ա. ՆԵՎԵՐՈՎ—Ինչպես ելին ապրում տիկնիկները յեզ ինչ արեց արենին զինվորը: (Պատ.) Գինը 16 կոպ.
- Ա. ԿՐԱՎԶԵՆԿՈ—Ինչպես Սաբոն Կարմիր Բանակային
դարձավ: Գինը 35 կոպ.
- Յ. ՖՈՒԲՍ—Մինիստ մեկ ժամով: (Պատկ.) գինը 20 կ.
- Յ. Ո.ԴԻՒՆ—Փրոներ, պահպանիր առողջությունը:
Գինը 10 կ.
- ՈՒԺՈՎ—Պատանի պիտներ: (Ժողովածու): (Տպագր.):

Դ ի մ ե լ՝ Պեнտական Հանրապետության Գրադարան
Խորհրդական Ազգային Գրադարան
Կառավարության կողմէ հանձնարարություն ունի



ՀՀ Ազգային Գրադարան



NL0189011

ԳԻՆԸ 15 ԿՈԹԵԿ



З. БОЯРСКАЯ
„КЛАРА ЦЕТКИН“
(биографич. очерк)

На армянском яз.

Центральное Издательство Народов Союза С. С. Р.
Москва

Никольская 10.